Մ. ԽԵՐԱՆՅԱՆ

ԾՏԻ ԳՈՒԼՊԱՆԵՐԸ



891.99Ս
Խ-48

30 MAY 2011

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ

ԾՏԻ ԳՈՒԼՊԱՆԵՐԸ

ՀԵՔՅԱԹ

Նկարները Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

08.05.2013
9682
1489
39

1

Ժամանակով
Կար ու չկար՝
Մի ծլվլան
Պատիկ ծիտ կար,
Բուն եր դրել
Նա անվտանգ՝
Տատիկի տան
Կտուրի տակ։
Շատ ապահով
Հարմար բուն եր,
Զար փիսիկից
Նա վախ չուներ.
Ծլվլվլում եր,
Անհոգ յերգում,
Կերն ու կուտն ել
Տատն եր հոգում։

Ծիտը մի որ
Ծառի վրա՝
Տեսնում է վոր
Տատիկն ահա
Նստած իր տան
Դռան շեմքին,
Ինչ-վոր մի բան
Բռնած ձեռքին՝
Գործում է ժիր,
Արագ-արագ,
Հինգ ճաղերով
Մանր ու բարակ։

Ծիտը թռավ,
Ծառից իջավ,
Նստեց մոտիկ,
Ասաց՝ «Տատիկ,
Ի՞նչ ես գործում
Արագ-արագ
Այդ ճաղերով
Մանր ու բարակ»։

Տատը ժպտաց,
Ժպտաց ասաց.
— Անհոգ ծի՛տ ես,
Յերանի քեզ։
Չէ՞ վոր արդեն
Աշունն է, տես,
Նստել ծառին,
Հանդ ու արտին,
Շուտով, ծիտ ջան,
Ձմեռ կըգա,
Ձյուն կը տեղա
Ու ցուրտ կանի,
Իսկ թոռնիկըս
Գուլպա չունի.
— Այդ ինչքան լավ
Տատիկ ես դու,—
Ծիտը ասավ
Քաղցրալեզու.
Ի՞նչ կը լինի,
Տատիկ բարի,

Տոտիկներովըս հարմար՝
Մեկն էլ գործես ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՝
Տոտիկներըս ցուրտ չը տանի։
    Տատը բարի
    Ժպտաց էլի,
    Ասաց.— Ծի՛տ ջան,
    Ի՛մ սիրելի,
    Գործեմ, շա՛տ լավ,
    Այն ժամանակ,
    Բեր մի քուլա
    Մաքուր բամբակ,
    Գզրարին տուր,
    Գզի տա քեզ,
    Բեր ինձի տուր
    Գզածն՝ ու յես,
    Պուրակ-պուրակ,
    Իլիկ-իլիկ
    Մանեմ բարակ
    Յերկար թելիկ,

Թելն ոլորեմ,
Շինեմ կծիկ,
Տոտիկներիդ չափին հարմար
Գուլպա գործեմ յես քեզ համար։

2

Ծիտը ուղղակի
Թռավ ու հասավ
Արտը բամբակի
Յեվ այսպես ասավ.
— Արտ, սպիտակ
Տուր ինձ բամբակ
Տանեմ գզրարին,
Գզրարը գզի,
Տանեմ տատիկին,
Տատիկը բարի,
Պուրակ-պուրակ,
Իլիկ-Իլիկ
Մանի բարակ
Յերկար թելիկ,

Թելն ոլորի
Շինի կծիկ
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործի նա ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՝
Տոտիկներս ցուրտ չը տանի։

— Լավ, ծիտիկ Ջան,—արտն ասաց,
Յես ծարավ եմ չափազանց,
Դու Ջրբաշխից
Ջուրը բեր ինձ...

3

Ծիտը արտին «լավ» ասավ,
Ջրբաժանի մոտ հասավ,
Ծլվլվլաց, ասավ.
— Ջրբաժան Ջան, Ջուր տուր ինձ,
Ջուրը տանեմ արտին տամ,
Արտը ինձի բամբակ տա,
Տանեմ գզրարին,
Գզրարը գզի,

Տանեմ տատիկին,
Տատիկը բարի՝
Պուրակ-պուրակ,
Իլիկ-իլիկ
Մանի բարակ
Յերկար թելիկ,
Թելն ոլորի,
Շինի կծիկ,
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործի նա ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՝
Տոտիկներս ցուրտ չը տանի։
Զրաբաժանը՝ թե.
— Ա՛յ ծիա, թուիր դե
Այգեպանից շուտ
Խաղող բեր մի ճութ...

4

Ծիտը նրան «լավ» ասաց,
Այգեպանի մոտ գնաց,

Թառեց թփին ծլվլաց.
—Այգեպան Ջան, շուտ-շուտ-շուտ
Խաղող տուր ինձ դու մի ճութ,
Զրբաժանին տանեմ տամ,
Զրբաժանը ինձ Ջուր տա,
Ջուրը տանեմ արտին տամ,
Արտը ինձի բամբակ տա,
Տանեմ գզրարին,
Գզրարը գզի,
Տանեմ տատիկին,
Տատիկը բարի՝
Պուրակ-պուրակ,
Իլիկ-իլիկ
Մանի բարակ
Յերկար թելիկ,
Թելն ոլորի
Շինի կծիկ,
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործի նա ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՝

Տոտիկներս ցուրտը չը տանի։
Այգեպանը թե՝
— Փոքրիկ յերգիչ,
Ինձ համար դե
Յերգիր մի քիչ,
Ու թե յերգըդ հավանեցի՝
Խաղողը տամ, առ ու թռի։

5

— Համաձայն եմ քո պայմանին,—
Ծիտը ասաց այգեպանին,
Ու խաղողի
Թփին նստած՝
Ծտավարի
Նա ծլվծլաց.
— «Պստիկ ծիտ եմ,
Ծիվ-ծիվ-ծիվ,
Յերգեր գիտեմ բազմաթիվ,
Ունեմ ճարպիկ
Ու թեթև

Փափկափետրիկ
Յերկու թև.
Որբս ուրախ
Ու պայծառ՝
Թռչկոտում եմ
Ծառից-ծառ.
Տերևների
Շվաքում
Յերգում եմ յես,
Նվագում։
Փոքրիկ ծիտ եմ,
Ծիվ-ծիվ-ծիվ,
Յերգեր գիտեմ
Բազմաթիվ.
— Լավ ես յերգում, աչքիս լույս,—
Ասաց նրան այգեպանն,
Տալիս եմ քեզ մի վողկույզ
Իմ պայմանի համաձայն։

6

Ծիտը իսկույն
Են վոսկեգույն
Խաղողն առավ
Կտցին՝ թռավ,
Տարավ տվեց
Ջրբաժանին
Ջրբաժանը
Անուշ արավ
Ու ջուր տվեց
Արտին ծարավ.
Արտը ծտին՝
Ճերմակ-ճերմակ
Տվեց մի մեծ
Քուլա բամբակ։
Ծիտը ուրախ
Բամբակն առավ
Ու գզրարի
Մոտը տարավ,
Ծլվլլաց, ասավ.
— Գզրար ջան, գզրար,

Խնդիրը՝ լսիր,
Ես բամբակը առ
Ու մի լավ գզիր,
Տանեմ տատիկին,
Տատիկը բարի՝
Գուրակ-գուրակ,
Իլիկ-իլիկ
Մանի բարակ
Յերկար թելիկ
Թելն ոլորի
Շինի կծիկ՝
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործի նա ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՞
Տոտիկներըս ցուրտ չըտանի՞։

7

Գզբարն առավ
Մեր ծըլվըլան
Ծտի բերած

Են մեծ քուլան՝
Զիք-չաք, չիք-չաք—
Ցերկու բերան
Գզեց իսկույն,
Տվեց նրան։

Ծիտը առավ ու թռավ,
Անմիջապես տուն հասավ,
Տվեց տատին և ասավ.
— Ա՛յ, բերել եմ քեզ ահա
Գզած բամբակ մի քուլա,
Առ, տատիկ ջան, շուտ արա,
Մանիր, բարակ թել արա,
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործիր ինձ համար,
Վոր ձմեռ գա ու ցուրտ անի՞
Տոտիկներըս ցուրտ չըտանի՞։

4189
39

8

Տատը պառավ
Բամբակն առավ,

Պուրակ-պուրակ,
Իլիկ-իլիկ
Մանեց բարակ
Յերկար թելիկ,
Թելն ոլորեց
Շինեց կծիկ,
Նստեց ապա
Գործեց գուլպա
Մեր ծլվլան
Ծտի համար
Տատիկների
Զափին հարմար։

Զմեռ եր ձյունոտ,
Ու ցուրտ եր սաստիկ,
Սակայն մեր ծանոթ
Են ծիտը պստիկ
Տատիկի գործած
Տաք գուլպաները
Յերկար վեր քաշած

Մինչև ծնկները՝
Սառ ձյունով պատած
Տանիքին նստած՝
Իսկի չէր մրսում
Ու յերգ եր ասում։—

— «Ծիտ եմ, ծիտ եմ,
Փոքրիկ ծիտ եմ,
Տոտիկներիս
Հարգը գիտեմ։
Յերգ եմ ասել
Այդեպանին,
Խաղող տարել
Զրբաժանին,
Նրանից էլ
Զուր եմ առել,
Տարել ծարավ
Արտին տվել,
Արտից փափուկ
Բամբակ առել,

Գզրարին եմ
Խնդիրք արել
Ու բամբակը
Գզել տվել,
Գզածն առել
Տատին տվել։
Տատը բարի՝
Պուրակ-պուրակ,
Իլիկ-իլիկ
Մանել բարակ
Յերկար թելիկ,
Թելն ոլորել
Շինել կծիկ
Ու նստել է
Արագ-արագ,
Հինգ ճաղերով
Մանր ու բարակ
Տոտիկներիս չափին հարմար
Գուլպա գործել նա ինձ համար,
Տոտիկներըս

Տաք գուլպայում
Ցրտից յերբեք
Չեմ վախենում։
Ինչքան կուզի
Թող ցուրտ անի,
Տոտիկներիս
Ցուրտն ինչ կանի։
Ել չեմ մրսի
Յես այսուհետ,
Ապրի տատին
Իր թոռան հետ»։

ՀՍՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Սրզաքանյան

Գլավլիտի լիազոր՝ Վ. 2017 Հրատ. 4325.
Պատվեր 169 Տիրաժ 4000.
Թուղթ 72×105. Տպագր. $1^1/_4$ մամ.
Մեկ մամուլում 11,520.
Հանձնված է արտադրության 14 փետրվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 15 ոգոստ. 1938 թ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի, 65.

«Ազգային գրադարան»
NL0400166

ԳԻՆԸ 65 Կ.

9682

М. ХЕРАНЯН

НОСОЧКИ ВОРОБЬЯ

ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН